Հայաստ

# ԳՈՎԱԶԴ ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն եւ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊԸ-ն դիմել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետությունում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից ամսական մինչեւ 10.0 հազար նորմալ խորանարդ մետր սպառողներին (բաժանորդներին) վաճառվող բնական գազի սակագնի ու ամսական 10.0 հազար նորմալ խորանարդ մետր եւ ավելի սպառողներին (բաժանորդներին) վաճառվող բնական գազի յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման բանաձեւի, ինչպես նաեւ Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ), Բնական գազի բաշխման գործունեության («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ) եւ Բնական գազի փոխադրման գործունեության («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊԸ) սակագների վերանայման հայտերով:

**Ամսական մինչեւ 10.0 հազար նորմալ խորանարդ մետր սպառում ունեցող սպառողներին (բաժանորդներին) վաճառվող յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի՝**

– գործող սակագինը 132 000 դրամ, ներառյալ ԱԱՀ,

– առաջարկվող սակագինը 221 000 դրամ, ներառյալ ԱԱՀ:

**Ամսական 10.0 հազար նորմալ խորանարդ մետր եւ ավելի սպառում ունեցող սպառողներին (բաժանորդներին) վաճառվող յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի՝ յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման՝**

– գործող բանաձեւը՝ P =243.13 x E, որտեղ P-ն 10.0 հազար նորմալ խորանարդ մետր եւ ավելի սպառողներին (բաժանորդներին) վաճառվող, 7900կկալ/նորմալ խորանարդ մետր ջերմարարություն ունեցող, բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազ.խմ), ներառյալ ԱԱՀ, E-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձեւավորված միջին փոխարժեքի մեծությունն է,

– առաջարկվող բանաձեւը՝ P = 392.05 x E, որտեղ P-ն 10.0 հազար նորմալ խորանարդ մետր եւ ավելի սպառողներին (բաժանորդներին) վաճառվող, բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազ.խմ), ներառյալ ԱԱՀ, E-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձեւավորված միջին փոխարժեքի մեծությունն է:

**Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման՝**

– գործող սակագինը՝ 20.618 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, ներկրված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար,

– առաջարկվող սակագինը՝ 33.695 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, ներկրված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար:

**Բնական գազի բաշխման՝**

– գործող սակագինը՝ 13709.698 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, բաշխված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար,

– առաջարկվող սակագինը՝ 26638.071 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, բաշխված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար:

**Բնական գազի փոխադրման՝**

– գործող սակագինը՝ 6948.266 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, փոխադրված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար,

– առաջարկվող սակագինը՝ 12989.186 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, փոխադրված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար:

*«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ*
*ՀՀ, ք. Երեւան, Թբիլիսյան խճուղի 43,*
*Հեռախոս 29-47-28, Ֆաքս 29-47-28*

*«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊԸ*
*ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վ. Պտղնի,*
*Հեռախոս 29-48-20, Ֆաքս 29-48-22*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանը ... րարում է ասպիրանտուրայի 2013/14թթ. ուսումնակ... դունելություն պետպատվերի շրջանակներում (առկ... հետեւյալ գիտական մասնագիտություններով.*

01.04.10. Կիսահաղորդիչների ֆիզիկա

